ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Դեկտեմբերի 7-ին, կիրակի- Գ. կիր. Յիսնակաց։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Այս աշխարհի վրա նեղություն պիտի ունենաք, բայց քաջալերվեցե՛ք, որովհետև Ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. ԺԶ 33) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս 19)։

Դեկտեմբերի 9-ին, երեքշաբթի- Պահք։ Յոութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Արժանապատիվ Տ. Արիստակես քհն. Բաղալյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը «Օրհնեալ ես Դու ի կանայս եւ օրհնեալ է պտուղ յորովայնի քո» (Ղուկ. Ա 42) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս 23)։

Դեկտեմբերի 14-ին, կիրակի- Դ. կիր. Յիսնակաց։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Հովնանյանը։ Հավարտ Ս. Պատարագի Վեհափառ Հոր հանդիսապետությամբ Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսի Բ-ի հոգու հանգստության համար կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն։

Դեկտեմբերի 21-ին, կիրակի- Ե կիր. Յիսնակաց։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պարսամյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Դեկտեմբերի 25-ին, հինգշաբթի- Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եւ առաջին մարտիրոսին։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Գերաշնորհ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը։ Հընթացս Ս. Պատարագի, ձեռամբ պատարագիչ Սրբազան Հոր, կատարվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ե լսարանի սաների սարկավագական ձեռնադրությունը։ Ձեռնադրության ավարտին Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց։

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Դեկտեմբերի 28-ին, կիրակի- Զ. կիր. Յիսնակաց։

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Արժանապատիվ Տ. Պարույր քահանա Ավետիսյանը։ «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց։